# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 9

**ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի խորհրդի 2009թ. հունիսի 16-ի նիստի**

Խորհրդի 32 անդամներից ներկա էին 25-ը: Նախագահում էր խորհրդի նախագահ Գ.Ղազինյանը, քարտուղարում՝ խորհրդի քարտուղար Տ.Դավթյանը: Քվորումը ստուգելուց հետո խորհրդի նախագահը քվեարկության դրեց օրակարգը /կցվում է/: Միաձայն հաստատելուց հետո, խորհուրդն անցավ օրակարգի հարցերի քննարկմանը:

**1. ԼՍԵՑԻՆ. 2008-2009 ուսումնական տարվա պետական քննությունների արդյունքների ամփոփման հարցը (զեկուցող՝ պետական քննական հանձնաժողովների նախագահներ):**

Հանձնաժողովների նախագահները հաշվետվություն ներկայացրեցին 2008-2009 ուսումնական տարվա համապատասխան մասնագիտացումների գծով բակալավրիատի և հեռակա ուսուցման բաժնի պետական քննությունների, ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանության արդյունքների վերաբերյալ (հաշվետվությունները կցվում են), ինչպես նաև խորհրդի անդամների հետ քննարկեցին քննական գործընթացի հետ կապված իրենց տպավորություններն ու առաջարկությունները:

Հիմնականում գոհացուցիչ են բակալավրատի պետական քննությունների արդյունքները, սակայն որոշ մտահոգություններ արտահայտվեցին առանձին ուսանողների կողմից դասագրքային դրույթների մեխանիկական հաճախ չիմաստավորված կամ աղավաղված վերարտադրման ջանքերը, շատ դեպքերում գործնական օրինակներ բերելու անկարողությունը, ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային բնույթի որոշումների մասին անտեղյակ լինելը:

Հանձնաժողովների նախագահները ընդգծեցին որոշ դեպքերում ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի վերաբերյալ կարծիքների կամ գրախոսականների ցածր որակը: Դրա հետ մեկտեղ նշվեց, որ ղեկավարները և գրախոսողները միշտ չէ, որ ներկա են եղել համապատասխան աշխատանքների պաշտպանությանը: Վիճակն առավել գոհացուցիչ դարձնելու համար առաջարկվեց միջոցներ ձեռնարկել մագիստրոսական աշխատանքների ղեկավարների պատասխանատվությունը բարձրացնելու, մագիստրոսների աշխատանքի ընթացիկ ստուգումները խստացնելու և պետական կամ ոչ պետական մարմիններում կազմակերպվող ուսումնական պրակտիկան առավել արդյունավետ դարձնելու ուղղությամբ:

Հանձնաժողովների նախագահները շեշտեցին նաև հեռակա ուսուցման բաժնի որոշ ուսանողների խիստ ցածր մակարդակը և առաջարկեցին համապատասխան միջոցներ ձեռնարկել հաջորդ տարի նման բացասական երևույթներից խուսափելու համար:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ն. Այվազյանը, Ա. Գաբուզյանը, Տ. Բարսեղյանը, Վ. Քոչարյանը, Ա. Վաղարշյանը, Գ. Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. 2008-2009 ուսումնական տարվա պետական քննությունների արդյունքների վերաբերյալ պետական քննական հանձնաժողովների նախագահների հաշվետվություններն ընդունել ի գիտություն:

2. **ԼՍԵՑԻՆ. Իրավագիտության ֆակուլտետի եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի հաշվետվությունը ուսումնական և գիտահետազոտական գործունեության մասին (զեկուցող՝ ամբիոնի վարիչ Վ. Քոչարյան ):**

Հաշվետվությունը կցվում է:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Տ.Բարսեղյանը, Գ.Ղարախանյանը, Ա.Գաբուզյանը, Գ.Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի հաշվետվությունն ընդունել ի գիտություն, իսկ հաշվետու ժամանակահատվածում ամբիոնում կատարված աշխատանքը գնահատել դրական:

**3. ԼՍԵՑԻՆ. 2009-10 ուսումնական տարվա ամբիոնային և անհատական**

**ծանրաբեռնվածությունների հաստատման հարցը (զեկուցող՝ ամբիոնի վարիչներ):**

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Զեկուցողները ըստ ամբիոնների ներկայացրեցին ֆակուլտետի դասախոսների անհատական ծանրաբեռնվածությունները և նշեցին, որ դրանք կազմելու ընթացքում առաջացած գրեթե բոլոր խնդիրները լուծվել են:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ա. Գաբուզյանը, Ա. Իսկոյանը, Հ. Հովսեփյանը, Գ. Ղարախանյանը, Գ. Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաստատել ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի դասախոսների 2009-10 ուս. տարվա անհատական ծանրաբեռնվածությունը:

**4. ԼՍԵՑԻՆ. Հաղորդում ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետում ուսումնական և ուսումնաօժանդակ գրականության վիճակի վերաբերյալ (զեկուցող՝ գիտքարտուղար Տ. Դավթյան):**

Զեկուցողը ներկայացրեց, որ գրեթե բոլոր ամբիոնները սպառիչ տեղեկատվություն են ներկայացրել ուսումնական և ուսումնաօժանդակ գրականության վերաբերյալ: Ամփոփելով ներկայացված տվյալները կարելի է փաստել, որ ընդհանուր առմամբ ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետում ուսումնական և ուսումնաօժանդակ գրականության վիճակը բավարար է : Դրա օբյեկտիվ պատճառն այն է, որ ՀՀ օրենսդրությունն արագ և հաճախակի է փոփոխության ենթարկվում և մեկ կամ երկու տարի առաջ հրատարակված դասագրքերը, ուսումնական ձեռնարկները այսօր արդեն չեն համապատասխանում գործող օրենսդրությանը: Փոփոխությունները երբեմն այնպիսին են, որ դասագրքերի վերահրատարակումը բավարար չէ և անհրաժեշտ է պատրաստել դասընթացի ծրագրին համապատասխանող նոր դասագիրք: Այս առումով մեծ աշխատանք ունեն կատարելու քաղաքացիական դատավարության, քրեական, քերական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնները, հարաբերականորեն կայուն է վիճակը պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնում:

Սուբյեկտիվ պատճառը ամբիոնների ոչ բավարար հետևողականությունն է այդ հարցում, եթե ոչ ուսումնական, ապա առավելապես ուսումնաօժանդակ գրականության ստեղծման հարցում: Առավել վատ վիճակում է ուսումնաօժանդակ գրականության ստեղծման գործընթացը, խնդրագրքերի կամ թեստերի պատրաստման ուղղությամբ գրեթե աշխատանքներ չեն տարվում :

Զեկուցողը հայտնեց նաև, որ ներկայացված տվյալները ամփոփվել են ըստ կրթական ծրագրերի՝ բակալավր և մագիստրատուրա: Եթե բակալավրիատում քիչ թե շատ հիմնական առարկաներն ապահովված են ուսումնական գրականությամբ, որոշ ամբիոններում նաև ուսումնաօժանդակ գրականությամբ, ապա բոլորովին հակառակ իրավիճակն է մագիստրատուրայում: Դրա օբյեկտիվ պատճառն այն է, որ մագիստրատուրայում դասավանդվող առարկաներն ունեն իրենց առանձնահատկությունները, առանձնահատուկ է նաև ուսուցման կազմակերպման գործընթացը, քանի որ եթե բակալավրատում նախատեսվում է գիտելիքի ձեռքբերում և ընկալում, ապա մագիստրատուրայում նախատեսվում է գիտելիքի կիրառում և անալիզ, ինչը ենթադրում է նոր մեթոդներ և նոր նյութերի առկայություն: Ուստի, այդ դեպքում, զուգե հնարավոր չէ նույնիսկ առանձին դասընթացների գծով դասախոսությունների տեքստերի պատրաստումը, առավել ևս ուսումնական ձեռնարկների կամ դասագրքերի: Այս պարագայում պարտադիր պահանջ ենք համարում համալիր նյութերի տրամադրումը ուսանողներին:

Դրական պետք է համարել առանձին ամբիոնների նախատեսած աշխատանքները՝ որոշ առարկաների գծով թարգմանությունների կատարման վերաբերյալ: Այդպիսի աշխատանքներ են նախատեսել միջազգային և եվրոպական իրավունքի ամբիոնը, սահմանադրական իրավունքի ամբիոնը, պետության և իրավունքի տեսության և պատմության ամբիոնները: Դրական է նաև մագիստրատուրայում դասավանդվող առարկաներից դասախոսությունների տեքստերի նախապատրաստումը, որը ներկայումս իրականացնում են գրեթե բոլոր ամբիոնները: Այդ դեպքում արդեն վերանայման կարիք ունեն այդ աշխատանքների կատարման ժամկետները: Դա նկատվում է հատկապես քրեական դատավարության և

կրիմինալիստիկայի ամբիոնում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ն. Այվազյանը, Ս. Դիլբանդյանը, Գ. Ղարախանյանը, Գ. Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետում ուսումնական և ուսումնաօժանդակ գրականության վիճակի վերաբերյալ հաղորդումն ընդունել ի գիտություն:

**5. ԼՍԵՑԻՆ. Ուսումնական առարկայական ծրագրերի օրինակելի ձևի հաստատման հարցը (զեկուցող՝ մեթոդխորհրդի նախագահ՝ Ռ. Մելիքյան) :**

Զեկուցողը ներկայացրեց ծրագրի ձևը և ամբիոններից նախապես ստացված դիտողությունները այդ կապակությամբ :

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Տ.Բարսեղյանը, Գ.Ղարախանյանը, Ա.Գաբուզյանը, Գ.Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի մեթոդխորհրդի նախագահին հանձնարարել լրամշակել ներկայացված նախագիծը՝ խորհրդի անդամների դիտողություններին համապատասխան և վերջնական տարբերակը քննարկման ներկայացնել խորհրդի հաջորդ նիստում :

**6. ԼՍԵՑԻՆ** ԵՊՀ 90 ամյակին նվիրված ՈՒԳԸ նստաշրջանում իրավագիտության ֆակուլտետի ուսանողների զեկույցները տպագրության երաշխավորելու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ն. Այվազյանը, Ս. Դիլբանդյանը, Գ. Ղարախանյանը, Գ. Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաշվի առնելով, որ ԵՊՀ 90 ամյակին նվիրված ՈՒԳԸ նստաշրջանում իրավագիտության ֆակուլտետի ուսանողների Սայադ Բաղալյանի «Երկքաղաքացիների ընտրական իրավունքը ՀՀ-ում», Գեղամ Գևորգյանի «Բարեխղճությունը՝ որպես գործարարական հարաբերությունների իրավական կարգավորման սկզբունք», Նանե Ղազարյանի «Հեղինակային իրավունքի պաշտպանությունը», Լաուրա Զոհրաբյանի «Սուբյեկտիվ իրավունքների իրականացումը» Ծովինար Անանյանի «Փքրահասակի կողմից վնաս պատճառելու հետևանքով ծագած պարտավորությունները», Արուս Հայրապետյանի «Մեղքը՝ որպես քաղաքացիաիրավական պատասխանատվության պայման», Անահիտ Մանասյանի "Конституционный суд РА и прецедентная практика Европейского суда по правам человека", Լավրենտի Աղուլյանի "Государственный суверенитет. Современное конституционное регулирование и проблема практической реализованности", Անահիտ Հարությունյանի «Իրավունքի և բարոյականության հակասությունները և դրանց հաղթահարման ուղիները», «Օպերատիվ-հետախուզական որոշ միջոցառումների իրավաչափության եվրոպական չափանիշները» թեմաներով զեկույցները բավարարում են գիտական հոդվածին ներկայացվող բոլոր պահանջներին, երաշխավորել դրանք տպագրության :

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Գ.ՂԱԶԻՆՅԱՆ

ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Տ.ԴԱՎԹՅԱՆ

**ՔԱՂՎԱԾՔ**
**ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի խորհրդի**
**2009թ. հունիսի 16-ի նիստի թիվ 9 արձանագրությունից**

**ԼՍԵՑԻՆ. 2008-2009 ուսումնական տարվա պետական քննությունների արդյունքների ամփոփման հարցը (զեկուցող՝ պետական քննական հանձնաժողովների նախագահներ):**

Հանձնաժողովների նախագահները հաշվետվություն ներկայացրեցին 2008-2009 ուսումնական տարվա համապատասխան մասնագիտացումների գծով բակալավրիատի և հեռակա ուսուցման բաժնի պետական քննությունների, ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանության արդյունքների վերաբերյալ (հաշվետվությունները կցվում են), ինչպես նաև խորհրդի անդամների հետ քննարկեցին քննական գործընթացի հետ կապված իրենց տպավորություններն ու առաջարկությունները:

Հիմնականում գոհացուցիչ էին բակալավրատի պետական քննությունների արդյունքները, սակայն որոշ մտահոգություններ արտահայտվեցին առանձին ուսանողների կողմից դասագրքային դրույթների մեխանիկական վերարտադրման ջանքերը, շատ դեպքերում գործնական օրինակներ բերելու անկարողությունը, ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային բնույթի որոշումների մասին անտեղյակ լինելը:

Հանձնաժողովների նախագահները ընդգծեցին որոշ դեպքերում ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի վերաբերյալ կարծիքների կամ գրախոսականների ցածր որակը: Դրա հետ մեկտեղ նշվեց, որ ղեկավարները և գրախոսողները միշտ չէ, որ ներկա են եղել համապատասխան աշխատանքների պաշտպանությանը: Վիճակն առավել գոհացուցիչ դարձնելու համար առաջարկվեց միջոցներ ձեռնարկել մագիստրոսական աշխատանքների ղեկավարների պատասխանատվությունը բարձրացնելու, մագիստրոսների աշխատանքի ընթացիկ ստուգումները խստացնելու և պետական կամ ոչ պետական մարմիններում կազմակերպվող ուսումնական պրակտիկան առավել արդյունավետ դարձնելու ուղղությամբ:

Հանձնաժողովների նախագահները շեշտեցին նաև հեռակա ուսուցման բաժնի որոշ ուսանողների խիստ ցածր մակարդակը և առաջարկեցին համապատասխան միջոցներ ձեռնարկել հաջորդ տարի նման բացասական երևույթներից խուսափելու համար:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Ն. Այվազյանը, Ա. Գաբուզյանը, Տ. Բարսեղյանը, Վ. Քոչարյանը, Ա. Վաղարշյանը, Գ. Ղազինյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ.** 2008-2009 ուսումնական տարվա պետական քննությունների արդյունքների վերաբերյալ պետական քննական հանձնաժողովների նախագահների հաշվետվություններն ընդունել ի գիտություն:

*Խորհրդի նախագահ* *Գ. Ղազինյան*

*Խորհրդի քարտուղար* *Տ. Դավթյան*

*Իսկականի հետ ճիշտ է*
*Խորհրդի քարտուղար* *Տ. Դավթյան*

**ՔԱՂՎԱԾՔ**
**ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի խորհրդի**
**2009թ. հունիսի 16-ի նիստի թիվ 9 արձանագրությունից**

ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի 4-րդ կուրսի ուսանող Սայադ Բաղալյանի ԵՊՀ 90 ամյակին նվիրված ՈՒԳԸ նստաշրջանում «Երկքաղաքացիների ընտրական իրավունքը ՀՀ-ում» թեմայով զեկուցումը տպագրության երաշխավորելու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ն. Այվազյանը, Տ. Բարսեղյանը, Ա. Գաբուզյանը, Գ. Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաշվի առնելով, որ Սայադ Բաղալյանի «Երկքաղաքացիների ընտրական իրավունքը ՀՀ-ում» թեմայով զեկուցումը բավարարում է գիտական հոդվածին ներկայացվող բոլոր պահանջներին, երաշխավորել այն տպագրության :

*Խորհրդի նախագահ* *Գ. Ղազինյան*

*Խորհրդի քարտուղար* *Տ. Դավթյան*

*Իսկականի հետ ճիշտ է*
*Խորհրդի քարտուղար* *Տ. Դավթյան*

**ՔԱՂՎԱԾՔ**
**ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի խորհրդի**
**2009թ. հունիսի 16-ի նիստի թիվ 9 արձանագրությունից**

ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանող Գեղամ Գևորգյանի ԵՊՀ 90 ամյակին նվիրված ՈՒԳԸ նստաշրջանում «Բարեխղճությունը՝ որպես գործարարական հարաբերությունների իրավական կարգավորման սկզբունք» թեմայով զեկուցումը տպագրության երաշխավորելու հարցը :

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Գ. Ղարախանյանը, Տ. Բարսեղյանը, Գ. Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաշվի առնելով, որ Գեղամ Գևորգյանի «Բարեխղճությունը՝ որպես գործարարական հարաբերությունների իրավական կարգավորման սկզբունք» թեմայով զեկուցումը բավարարում է գիտական հոդվածին ներկայացվող բոլոր պահանջներին, երաշխավորել այն տպագրության :

| | |
|---|---|
| *Խորհրդի նախագահ* | *Գ. Ղազինյան* |
| *Խորհրդի քարտուղար* | *Տ. Դավթյան* |

*Իսկականի հետ ճիշտ է*
*Խորհրդի քարտուղար* *Տ. Դավթյան*

**ՔԱՂՎԱԾՔ**
**ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի խորհրդի**
**2009թ. հունիսի 16-ի նիստի թիվ 9 արձանագրությունից**

ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի 3-րդ կուրսի ուսանողուհի Նանե Ղազարյանի ԵՊՀ 90 ամյակին նվիրված ՈՒԳԸ նստաշրջանում «Հեղինակային իրավունքի պաշտպանությունը» թեմայով զեկուցումը տպագրության երաշխավորելու հարցը :

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Գ. Ղարախանյանը, Տ. Բարսեղյանը, Գ. Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաշվի առնելով, որ Նանե Ղազարյանի «Հեղինակային իրավունքի պաշտպանությունը» թեմայով զեկուցումը բավարարում է գիտական հոդվածին ներկայացվող բոլոր պահանջներին, երաշխավորել այն տպագրության :

| | |
|---|---|
| *Խորհրդի նախագահ* | *Գ. Ղազինյան* |
| *Խորհրդի քարտուղար* | *Տ. Դավթյան* |

*Իսկականի հետ ճիշտ է*
| | |
|---|---|
| *Խորհրդի քարտուղար* | *Տ. Դավթյան* |

**ՔԱՂՎԱԾՔ**
**ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի խորհրդի**
**2009թ. հունիսի 16-ի նիստի թիվ 9 արձանագրությունից**

ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի 4-րդ կուրսի ուսանողուհի Լաուրա Զոհրաբյանի ԵՊՀ 90 ամյակին նվիրված ՈՒԳԸ նստաշրջանում «Սուբյեկտիվ իրավունքների իրականացումը» թեմայով զեկուցումը տպագրության երաշխավորելու հարցը :

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Գ. Ղարախանյանը, Տ. Բարսեղյանը, Տ. Դավթյանը, Գ. Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաշվի առնելով, որ Լաուրա Զոհրաբյանի «Սուբյեկտիվ իրավունքների իրականացումը» թեմայով զեկուցումը բավարարում է գիտական հոդվածին ներկայացվող բոլոր պահանջներին, երաշխավորել այն տպագրության :

| | |
|---|---|
| *Խորհրդի նախագահ* | *Գ. Ղազինյան* |
| *Խորհրդի քարտուղար* | *Տ. Դավթյան* |

*Իսկականի հետ ճիշտ է*
*Խորհրդի քարտուղար* *Տ. Դավթյան*

**ՔԱՂՎԱԾՔ**
**ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի խորհրդի**
**2009թ. հունիսի 16-ի նիստի թիվ 9 արձանագրությունից**

ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի 3-րդ կուրսի ուսանողուհի Ծովինար Անանյանի ԵՊՀ 90 ամյակին նվիրված ՈՒԳԸ նստաշրջանում «Փոքրահասակի կողմից վնաս պատճառելու հետևանքով ծագած պարտավորությունները» թեմայով զեկուցումը տպագրության երաշխավորելու հարցը :

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Գ. Ղարախանյանը, Տ. Բարսեղյանը, Տ. Դավթյանը, Գ. Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաշվի առնելով, որ Ծովինար Անանյանի «Փոքրահասակի կողմից վնաս պատճառելու հետևանքով ծագած պարտավորությունները» թեմայով զեկուցումը բավարարում է գիտական հոդվածին ներկայացվող բոլոր պահանջներին, երաշխավորել այն տպագրության :

| | |
|---|---|
| *Խորհրդի նախագահ* | *Գ. Ղազինյան* |
| *Խորհրդի քարտուղար* | *Տ. Դավթյան* |
| *Իսկականի հետ ճիշտ է*<br>*Խորհրդի քարտուղար* | *Տ. Դավթյան* |

**ՔԱՂՎԱԾՔ**
**ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի խորհրդի**
**2009թ. հունիսի 16-ի նիստի թիվ 9 արձանագրությունից**

ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի 4-րդ կուրսի ուսանողուհի Արուս Հայրապետյանի ԵՊՀ 90 ամյակին նվիրված ՈՒԳԸ նստաշրջանում «Մեղքը՝ որպես քաղաքացիաիրավական պատասխանատվության պայման» թեմայով զեկուցումը տպագրության երաշխավորելու հարցը :

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Գ. Ղարախանյանը, Տ. Բարսեղյանը, Գ. Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաշվի առնելով, որ Արուս Հայրապետյանի «Մեղքը՝ որպես քաղաքացիաիրավական պատասխանատվության պայման» թեմայով զեկուցումը բավարարում է գիտական հոդվածին ներկայացվող բոլոր պահանջներին, երաշխավորել այն տպագրության :

*Խորհրդի նախագահ* *Գ. Ղազինյան*

*Խորհրդի քարտուղար* *Տ. Դավթյան*

*Իսկականի հետ ճիշտ է*
*Խորհրդի քարտուղար* *Տ. Դավթյան*

**ՔԱՂՎԱԾՔ**
**ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի խորհրդի**
**2009թ. հունիսի 16-ի նիստի թիվ 9 արձանագրությունից**

ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանողուհի Անահիտ Մանասյանի ԵՊՀ 90 ամյակին նվիրված ՈՒԳԸ նստաշրջանում "Конституционный суд РА и прецедентная практика Европейского суда по правам человека" թեմայով զեկուցումը տպագրության երաշխավորելու հարցը :

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ն. Այվազյանը, Տ. Բարսեղյանը, Ա. Գաբուզյանը, Գ. Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաշվի առնելով, որ Անահիտ Մանասյանի "Конституционный суд РА и прецедентная практика Европейского суда по правам человека" թեմայով զեկուցումը բավարարում է գիտական հոդվածին ներկայացվող բոլոր պահանջներին, երաշխավորել այն տպագրության :

*Խորհրդի նախագահ* *Գ. Ղազինյան*

*Խորհրդի քարտուղար* *Տ. Դավթյան*

*Իսկականի հետ ճիշտ է*
*Խորհրդի քարտուղար* *Տ. Դավթյան*

**ՔԱՂՎԱԾՔ**
**ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի խորհրդի**
**2009թ. հունիսի 16-ի նիստի թիվ 9 արձանագրությունից**

ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի 3-րդ կուրսի ուսանող Լավրենտի Աղուլյանի ԵՊՀ 90 ամյակին նվիրված ՈՒԳԸ նստաշրջանում "Государственный суверенитет. Современное конституционное регулирование и проблема практической реализованности" թեմայով զեկուցումը տպագրության երաշխավորելու հարցը :

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ն. Այվազյանը, Տ. Բարսեղյանը, Ա. Գաբուզյանը, Գ. Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաշվի առնելով, որ Լավրենտի Աղուլյանի "Государственный суверенитет. Современное конституционное регулирование и проблема практической реализованности" թեմայով զեկուցումը բավարարում է գիտական հոդվածին ներկայացվող բոլոր պահանջներին, երաշխավորել այն տպագրության :

*Խորհրդի նախագահ* *Գ. Ղազինյան*

*Խորհրդի քարտուղար* *Տ. Դավթյան*

*Իսկականի հետ ճիշտ է*
*Խորհրդի քարտուղար* *Տ. Դավթյան*

**ՔԱՂՎԱԾՔ**
**ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի խորհրդի**
**2009թ. հունիսի 16-ի նիստի թիվ 9 արձանագրությունից**

ԼՍԵՑԻՆ. Ռուս-Հայկական սլավոնական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի 1-ին կուրսի ուսանողուհի Նաիրա Հովհաննիսյանի ԵՊՀ 90 ամյակին նվիրված ՈՒԳԸ նստաշրջանում "Проблема становления судебного прецедента как источника права в РА" թեմայով զեկուցումը տպագրության երաշխավորելու հարցը :

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ն. Այվազյանը, Տ. Բարսեղյանը, Ա. Գաբուզյանը, Գ. Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաշվի առնելով, որ Նաիրա Հովհաննիսյանի "Проблема становления судебного прецедента как источника права в РА" թեմայով զեկուցումը բավարարում է գիտական հոդվածին ներկայացվող բոլոր պահանջներին, երաշխավորել այն տպագրության :

| | |
|---|---|
| *Խորհրդի նախագահ* | *Գ. Ղազինյան* |
| *Խորհրդի քարտուղար* | *Տ. Դավթյան* |

*Իսկականի հետ ճիշտ է*
*Խորհրդի քարտուղար* *Տ. Դավթյան*

**ՔԱՂՎԱԾՔ**
**ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի խորհրդի**
**2009թ. հունիսի 16-ի նիստի թիվ 9 արձանագրությունից**

ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի 3-րդ կուրսի ուսանողուհի Անահիտ Հարությունյանի ԵՊՀ 90 ամյակին նվիրված ՈՒԳԸ նստաշրջանում «Իրավունքի և բարոյականության հակասությունները և դրանց հաղթահարման ուղիները» թեմայով զեկուցումը տպագրության երաշխավորելու հարցը :

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ա. Վաղարշյանը, Տ. Բարսեղյանը, Ա. Գաբուզյանը, Գ. Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաշվի առնելով, որ Անահիտ Հարությունյանի «Իրավունքի և բարոյականության հակասությունները և դրանց հաղթահարման ուղիները» թեմայով զեկուցումը բավարարում է գիտական հոդվածին ներկայացվող բոլոր պահանջներին, երաշխավորել այն տպագրության :

*Խորհրդի նախագահ* *Գ. Ղազինյան*

*Խորհրդի քարտուղար* *Տ. Դավթյան*

*Իսկականի հետ ճիշտ է*
*Խորհրդի քարտուղար* *Տ. Դավթյան*

**ՔԱՂՎԱԾՔ**
**ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի խորհրդի**
**2009թ. հունիսի 16-ի նիստի թիվ 9 արձանագրությունից**

ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանողուհի Իզաբելլա Հարությունյանի ԵՊՀ 90 ամյակին նվիրված ՈՒԳԸ նստաշրջանում «Օպերատիվ-հետախուզական որոշ միջոցառումների իրավաչափության եվրոպական չափանիշները» թեմայով զեկուցումը տպագրության երաշխավորելու հարցը :

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ա. Վաղարշյանը, Տ. Բարսեղյանը, Ա. Գաբուզյանը, Գ. Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաշվի առնելով, որ Իզաբելլա Հարությունյանի «Օպերատիվ-հետախուզական որոշ միջոցառումների իրավաչափության եվրոպական չափանիշները» թեմայով զեկուցումը բավարարում է գիտական հոդվածին ներկայացվող բոլոր պահանջներին, երաշխավորել այն տպագրության :

| | |
|---|---|
| *Խորհրդի նախագահ* | *Գ. Ղազինյան* |
| *Խորհրդի քարտուղար* | *Տ. Դավթյան* |

*Իսկականի հետ ճիշտ է*
*Խորհրդի քարտուղար* *Տ. Դավթյան*